




Բովանդակություն

Բովանդակություն	1
Օգտագործված տնտեսական ցուցանիշների համառոտագիր.....	2
Ֆինանսական դիրք	3
Վարկային պորտֆել և համեմատականներ	4
Տրամադրված վարկերի ծավալը	4
Տրամադրված վարկերի քանակը	4
Մասնաճյուղեր և վարկային պորտֆելի ցուցանիշներ	6
Վարկերի կառավարում	7
Վերլուծական գործակիցներ.....	8


Օգտագործված տնտեսական ցուցանիշների համառոտագիր

ՀՀ վարկային կազմակերպությունների միության անդամներն իրենց տնտեսական գործունեության վերաբերյալ ՀՀ վարկային կազմակերպությունների միությանն (ՀՀ ՎԿՄ) ամսական կտրվածքով տրամադրում են տասը տնտեսական ցուցանիշներ: Այդ ցուցանիշների հիման վրա Վարկային կազմակերպությունների միությունն իրականացնում է ֆինանսական վերլուծություն, որի նպատակն է միության անդամներին ներկայացնել վարկային ինդուստրիայում տեղի ունեցող տնտեսական շարժերը: Ցուցանիշների մի մասը հրապարակային տեղեկատվություն է, որոնք տեղ են գտնում վարկային կազմակերպությունների կողմից ներկայացվող եռամսյակային հաշվետվություններում: Սակայն սույն վերլուծության համար ՎԿՄ-ի անդամ կազմակերպությունների կողմից տրամադրվում են նաև այնպիսի տնտեսական ցուցանիշներ, որոնք տեղ չեն գտնում հրապարակային եռամսյակային հաշվետվությունների մեջ:

Ֆինանսական դիրք

- **Ակտիվներ:** ՀՀ ՎԿՄ անդամների համախառն ակտիվները 2019թ.-ի մարտի 31-ի դրությամբ կազմել են 152.4 մլրդ դրամ՝ 2018թ.-ի մարտի նկատմամբ աճելով 24.02%-ով, իսկ 2018թ.-ի փետրվարի նկատմամբ՝ 1.5%-ով (Գծ.1):
- **Վարկային Պորտֆել:** ՀՀ ՎԿՄ անդամների վարկային պորտֆելը 2019թ.-ի մարտի 31-ի դրությամբ կազմել է 123 մլրդ դրամ՝ նախորդ տարվա մարտի նկատմամբ աճելով 7.2% -ով, իսկ 2018թ. փետրվարի նկատմամբ՝ 1.5% -ով:
- **Կապիտալ:** ՀՀ ՎԿՄ անդամների ընդհանուր կապիտալը 2019թ.-ի մարտի վերջի դրությամբ կազմել է 48.7 մլրդ դրամ՝ 2018թ.-ի մարտի նկատմամբ աճելով 11.4%-ով, իսկ 2019թ.-ի փետրվարի նկատմամբ աճելով 0.8%-ով:

Գծապատկեր 1. ՀՀ ՎԿՄ անդամների ֆինանսական դիրքը 2018-2019թթ.-ների մարտի վերջի դրությամբ




Վարկային պորտֆել և համեմատականներ

Տրամադրված վարկերի ծավալը

- 2019թ.-ի մարտ ամսին ՀՀ ՎԿՄ անդամների կողմից տրամադրվել է 10.3 մլրդ դրամի վարկ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել է 1.6%-ով, իսկ 2018թ.-ի փետրվարի նկատմամբ աճել 0.6%-ով (Գծ. 2):


Գծապատկեր 2. ՀՀ ՎԿՄ անդամների կողմից 2018 և 2019 թթ.-երի հունվար-մարտ ամիսներին տրամադրված վարկերի ծավալը




Տրամադրված վարկերի քանակը

- 2019թ.-ի մարտ ամսին ՀՀ ՎԿՄ անդամների կողմից տրամադրվել է 19,866 վարկ, որը նախորդ ամսվա նկատմամբ աճել է 3.7%-ով, իսկ 2018թ.-ի մարտի նկատմամբ նվազել 3.8%-ով (Գծ. 3):
- 2019թ.-ի մարտ ամսվա վերջի դրությամբ ՀՀ ՎԿՄ անդամներն ունեցել են 153,509 ակտիվ վակառուներ: Ակտիվ վարկառուների քանակը 2018թ.-ի մարտի նկատմամբ նվազել է 2.4%-ով, 2018-ի փետրվարի նկատմամբ աճել 1.3%-ով:
- ՀՀ ՎԿՄ անդամների կողմից 2019թ.-ի մարտին տրամադրված վարկերի միջին մեծությունը կազմել է 518 հազար դրամ, իսկ վարկային պորտֆելի միջին վարկի մեծությունը կազմել է 799 հազար դրամ: Նույն ցուցանիշները 2018թ.-ի մարտին կազմել են համապատասխանաբար՝ 507 և 727 հազարական դրամ (Գծ. 4):

Գծապատկեր 3. ՀՀ ՎԿՄ անդամների կողմից 2018 և 2019 թթ.-երի հունվար-մարտ ամիսներին տրամադրված վարկերի քանակը




Գծապատկեր 4. ՀՀ ՎԿՄ անդամների կողմից տրամադրված վարկերի միջին մեծություն



Մասնաճյուղեր և վարկային պորտֆելի ցուցանիշներ

- 2019թ.-ի մարտի դրությամբ միության անդամները միասին վերցրած ՀՀ ամբողջ տարածքում ունեցել են 139 մասնաճյուղ, որը, համեմատած 2018թ.-ի մարտի հետ աճել է 4-ով:
- ՀՀ ՎԿՄ անդամները 2019թ.-ի մարտի դրությամբ ունեցել են 555 վարկային մասնագետ, որը 16-ով նվազել է 2018թ.-ի մարտի աշխատակիցների թվի համեմատ:
- 2019թ.-ի մարտին ՀՀ ՎԿՄ անդամների կողմից տրամադրված վարկերի գծով մեկ վարկային մասնագետի հաշվով միջին վարկի մեծությունը կազմել է 18.6 մլն դրամ, նախորդ ամսին՝ 18.5 մլն դրամ, իսկ 2018թ.-ի մարտին այս ցուցանիշը կազմել է 18.3 մլն դրամ (Գծ. 5):
- 2019թ.-ի մարտի վերջի դրությամբ ՀՀ ՎԿՄ անդամների վարկային պորտֆելը մեկ վարկային մասնագետի հաշվով կազմել է 221 մլն դրամ, նախորդ ամսվա 218 մլն դրամի և 2018թ.-ի մարտի 202 մլն դրամի համեմատ:


Գծապատկեր 5. ՀՀ ՎԿՄ անդամների միջին վարկային պորտֆելը մեկ վարկային մասնագետի հաշվով



Վարկերի կառավարում

- **Մինչև 30 օր ժամկետանց պորտֆել:** ՀՀ ՎԿՄ անդամների մինչև 30 օր ժամկետանց վարկերի ծավալը 2019թ.-ի մարտի վերջի դրությամբ կազմել է 1,425 մլն դրամ, նախորդ ամսվա 1,194 մլն դրամի և 2018թ.-ի մարտի՝ 800 մլն դրամի համեմատ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ մինչև 30 օր ժամկետանց վարկերի ծավալը աճել է 77.9%-ով, իսկ 2019թ.-ի փետրվարի նկատմամբ՝ 19.4%-ով: 2019թ.-ի մարտի վերջի դրությամբ մինչև 30 օր ժամկետանց վարկերի պորտֆելը կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի 1.16%-ը, 2018թ.-ի մարտին՝ 0.01% (Գծ. 6):
- **Ժամկետանց պորտֆել 30 օրից ավել:** ՀՀ ՎԿՄ անդամների 30 օրից ավել ժամկետանց վարկերի ծավալը 2019թ.-ի մարտի վերջի դրությամբ կազմել է 3,422 մլն դրամ, նախորդ ամսվա 3,542 մլն դրամի և 2018 թ.-ի մարտի՝ 1,908 մլն դրամի համեմատ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ 30 օրից ավել ժամկետանց վարկերի ծավալը աճել է 79.3%-ով, իսկ 2019թ.-ի փետրվարի նկատմամբ նվազել՝ 3.4%-ով: 2019թ.-ի մարտի վերջի դրությամբ 30 օրից ավել ժամկետանց վարկերի պորտֆելը կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի 2.79%-ը, 2018թ.-ի մարտին՝ 0.02%:
- **Զուտ դուրսգրումներ:** 2019թ.-ի մարտի վերջի դրությամբ միության անդամ վարկային կազմակերպությունների զուտ դուրս գրված վարկերի ծավալը կազմել է 2,018 մլն դրամ, նախորդ ամսվա 1,603 մլն դրամի և 2018թ.-ի մարտի՝ 463 մլն դրամի համեմատ: Զուտ դուրս գրված վարկերի ծավալը 2019թ.-ի մարտին նախորդ ամսվա նկատմամբ աճել է 25.9 %-ով, իսկ 2018թ.-ի մարտի նկատմամբ աճել է 335.7%-ով: Միության անդամների սույն թվականի մարտի զուտ դուրս գրված վարկերի ծավալը կազմել է համախառն վարկային պորտֆելի 1.65%-ը, նախորդ ամսվա 1.33%-ի և 2018թ.-ի մարտի 0.00%-ի համեմատ:

Գծապատկեր 6. ՀՀ ՎԿՄ անդամների վարկերի ծավալները մարտի 31-ի դրությամբ




Վերլուծական գործակիցներ

- 2019թ.-ի մարտի դրությամբ ՀՀ ՎԿՄ անդամների համախառն վարկային պորտֆելի և ակտիվների հարաբերակցությունը կազմել է 80.4%, որը վկայում է այն մասին, որ ակտիվների ծանրակշիռ մեծամասնությունը ուղղվում է վարկավորմանը: Նույն ցուցանիշը 2018թ.-ի մարտին կազմել է 93% (Գծ. 7):
- Սույն թվականի մարտի դրությամբ միության անդամների ընդհանուր կապիտալի և վարկային պորտֆելի հարաբերակցությունը կազմել է 39.7%: Այս ցուցանիշը ցույց է տալիս, որ միության անդամների վարկավորման ծավալի մոտ 39.7%-ը իրականացվում է սեփական կապիտալի հաշվին: Նույն ցուցանիշը 2018թ.-ի մարտին կազմել է 38%:
- 2019թ.-ի մարտի վերջի դրությամբ ՀՀ ՎԿՄ անդամների ընդհանուր կապիտալի և ակտիվների հարաբերակցությունը կազմել է 32%, որը վկայում է միության անդամ վարկային կազմակերպությունների բարձր կապիտալիզացիայի մասին: Նույն ցուցանիշը 2018թ.-ի մարտին կազմել է 36%:
- Ընդհանուր պարտավորությունների և կապիտալի հարաբերակցության ցուցանիշը ցույց է տալիս միավոր կապիտալի դիմաց ունեցած պարտավորությունների չափը: Այս ցուցանիշը ցույց է տալիս նաև վարկային բիզնեսի կառավարման արդյունավետության մակարդակը: 2019թ.-ի մարտ ամսվա դրությամբ ՀՀ ՎԿՄ

անդամների համար այս գործակիցը կազմել է 2.13, այսինքն միավոր կապիտալի դիմաց ունեցած պարտավորությունները 2.13 անգամ գերազանցել է կապիտալի մակարդակը: Նույն ցուցանիշը նախորդ տարվա մարտի համար կազմել է 1.81:

Գծապատկեր 7. ՀՀ ՎԿՄ անդամների վերլուծական գործակիցներ



Տրամադրված վարկերի ընդհանուր ծավալն ու քանակությունը

